ԱՀ Պետական նախարարին
հասցե՝ ԱՀ, ք.Ստեփանակերտ, Փետրվարի 20-ի փող., 1 շենք

Պատճենը՝
ԱՀ Գլխավոր դատախազությանը
հասցե՝ ԱՀ, ք.Ստեփանակերտ, Վ. Սարգսյան փող., 13 շենք

ԱՀ Ֆինանսների նախարարությանը
հասցե՝ ԱՀ, ք.Ստեփանակերտ, Փետրվարի 20-ի փող., 1 շենք

ԱՀ Գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամին
հասցե՝ ԱՀ, ք.Ստեփանակերտ, Ազատամարտիկների 40

ԱՀ Ներդրումային հիմնադրամին
հասցե՝ ԱՀ, ք.Ստեփանակերտ, Տիգրան Մեծի փող., 37/22 շենք

ԱՀ Նյութական վնասների հատուցման կոմիտեին
հասցե՝ ԱՀ, ք. Ստեփանակերտ, Ս.Դավիթի 15

Դիմում
(տեղեկատվություն տրամադրելու մասին)

Դիմումի հարգելի՛ հասցեատերեր

Արցախում ստեղծված իրավիճակով պայմանավորված բնակչությունը հետաքրքրված է պետական միջոցների ամեն մի մասի տնօրինմամբ ու հետագա ճակատագրով:

Գլխավոր դատախազությունը գրեթե ամեն օր հրապարակումներ է կատարում յուրացման, վատնման, խարդախության և այլ եղանակներով պետական միջոցների հափշտակության ենթադրյալ դեպքերի վերաբերյալ, ինչն էլ ավելի է բարձրացնում հանրության հետաքրքրությունը և առաջացնում կոնկրետ մտավախություններ պետական միջոցների հետագա իրավաչափ ճակատագրի հարցում:

Վերոգրյալի համատեքստում, հանրության և սույն դիմումի հեղինակների՝ հասարակական մի շարք կազմակերպությունների հետաքրքրությունն սպառելու նպատակով, առավելագույնս սեղմ ժամկետներում խնդրում ենք տրամադրել.

1. «Արցախէներգո», «Ղարաբաղ տելեկոմ», «Արցախգազ» ՓԲ և «ԱրցախՀԷԿ» ԲԲ ընկերությունների մասնավորեցման հիմքում դրված բոլոր փաստաթղթերի պատճենները:

2. Տվյալներ առ այն, թե կա՞(ն) արդյոք ԼՂՀ կառավարության կողմից ընդունված որոշում(ներ)՝ պետական գույքի մասնավորեցման (օտարման) պայմանագրերում պարտավորությունների ամրագրման և դրանց կատարման վերահսկման գործընթացը կանոնակարգելու վերաբերյալ[1]:

3. 2020թ. սեպտեմբերից առ այսօր, այն ֆիզիկական և իրավաբանական անձանց ցանկը (թեկուզ լրիվությամբ անհատականացնող տվյալները թաքցված վիճակում), ովքեր պետական միջոցների հաշվին գոյացած կամ պետական բյուջեից ֆինանսավորվող մարմինների, հիմնադրամների կամ այլ կազմակերպությունների հետ կնքել են 50 մլն ՀՀ դրամը գերազանցող ցանկացած գործարք (օրինակ՝ առուվաճառքի, փոխառության, դրամական միջոցների անհատույց օտարման, նվիրատվության և այլն)[2]:

4. Այն ֆիզիկական և իրավաբանական անձանց ցանկը (թեկուզ լրիվությամբ անհատականացնող տվյալները թաքցված վիճակում), որոնցից պետական միջոցների հաշվին ձեռք

---

[1] Եթե այո, ապա տրամադրեք նաև տվյալ որոշում(ներ)ի և կից հավելված(ներ)ի պատճենները:

[2] Տրամադրել նաև հիմք հանդիսացող փաստաթղթերն ու գործարքների պատճենները՝ անձանց անհատականացնող տվյալները թաքցված վիճակում:

է բերվել 300 քառ. մետր մակերեսը գերազանցող գույք, ինչպես նաև այն անձանց ցանկը, ովքեր պետական սեփականություն հանդիսացող 150 քառ. մետր մակերեսը գերազանցող գույք են ձեռք բերել այն օտարողներից[3]:

5. 2020թ. սեպտեմբերից առ այսօր, այն ֆիզիկական և իրավաբանական անձանց ցանկը (թեկուզ լրիվությամբ անհատականացնող տվյալները թաքցված վիճակում), ովքեր ցանկացած գործարքի կամ ակտի հիման վրա արժանացել են 50 մլն ՀՀ դրամից ավելի չափով պետական աջակցության (սուբսիդավորում, վնասների հատուցում և այլն):

Ի գիտություն. սույն հարցման տարբեր կետեր հասցեական են դիմումի ներածական մասում նշված տարբեր հասցեատերերի, ուստի պատասխանն ակնկալվում է կոնկրետ լիազորությունների մասով կոնկրետ հասցեատեր մարմնից:

Կցվում է Հասարակական կազմակերպությունների կողմից ստորագրությունները:

Հետադարձ կապ՝ «Աֆղանստանի պատերազմի վետերանների միություն» ՀԿ,
Վազգեն Սարգսյան 25
Հեռախոսահամար՝ 097-23-23-89 (Արմեն Գևորգյան)
e-mail: icsr.center@mail.ru

«Աֆղանստանի պատերազմի վետերանների միություն» ՀԿ ղեկավար և ԱՀ նախագահին կից գործող Հանրային խորհրդի նախագահ Ա.Գևորգյան

15.02.2023թ.

[3] Տրամադրել նաև հիմք հանդիսացող փաստաթղթերն ու գործարքների պատճենները՝ անձանց անհատականացնող տվյալները թաքցված վիճակում:

1) ОО „Духовное возрождение"
2) Председатель Балаян Есай Юрьевич.

3) [illegible]

4) ОО „Союз беженцев НКР" председатель [illegible]

4. Лидер гражданского общества Арцахской Республики Карабекян Д.П.

5. [illegible] российский Миротворческий казачий союз

6. [illegible]

7. [illegible]

8. [illegible]

9. ООО „ПА Секьюрити" А. Икрыцян

10. [illegible]

11. [illegible]

12. «[illegible]»

13. „Наше Дело-Арцах" НПО Тевосян Н.В

14. Независимый Центр Стратегических Исследований [illegible] Бабаян